Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
հոկտեմբերի 5-ի N 1272 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԵՎ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ԴՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԾԱՆՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՄԲ ՁԲԱՂՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՆՈՐ ՎԱՅՐՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են օրենքով սահմանված կարգով ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառող լիազոր մարմինների (այսուհետ՝ լիազոր մարմին) կողմից հաշվառված՝ ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց մասին տեղեկատվությունը հարկային մարմնին տրամադրելու կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Լիազոր մարմինների կողմից հաշվառված՝ ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց մասին տեղեկատվությունը հարկային մարմին է ներկայացվում էլեկտրոնային եղանակով, այդ թվում՝ փաստաթղթաշրջանառության «Mulberry» համակարգի միջոցով («Microsoft Excel» համակարգչային ծրագրի ձևաչափով):

3. Լիազոր մարմինները հաշվառված անձանց մասին տեղեկատվությունն իրենց պաշտոնական կայքում հրապարակելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, հարկային մարմնին են տրամադրում տեղեկատվություն՝

1) ծանուցման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով ծանուցում ներկայացրած և հաշվառված անձանց, ծանուցման ենթակա գործունեության իրականացման վայրի փոփոխման կամ նոր վայրում այդ գործունեությունն իրականացնելու համար ներկայացված ծանուցման հաշվառման մասին՝ համաձայն N 1 ձևի.

2) ծանուցում ներկայացրած և հաշվառված անձանց հաշվառման տվյալներում կատարված փոփոխությունների և ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքը կասեցնելու կամ դադարեցնելու մասին՝ համաձայն N 2 ձևի:

4. Սույն կարգն ուժի մեջ մտնելուց հետո՝ «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ծանուցման ենթակա գործունեության տեսակ համարվելու դեպքում լիազոր մարմինները մեկամսյա ժամկետում՝ համաձայն N 3 ձևի, հարկային մարմին են ներկայացնում տեղեկատվություն՝ մինչև տվյալ գործունեությունը ծանուցման ենթակա գործունեություն համարվելն այդ գործունեության տեսակի համար տրված լիցենզիաների մասին:

5. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան տեղեկությունների փոխանցման գործընթացն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 16-ի N 192-Ն որոշմամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ձև N 1

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԾԱՆՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԵՎ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԱՆՁԱՆՑ, ԾԱՆՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՄ ՆՈՐ ՎԱՅՐՈՒՄ ԱՅԴ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

20__ թ._____ ամսվա համար

_____

(տեղեկատվություն ներկայացնող՝ լիազոր մարմնի անվանումը)

NN ը/կ	Ծանուցում ներկայացրած և հաշվառված անձանց վերաբերյալ				Ծանուցումների հաշվառման վերաբերյալ								
	կազմակերպության անվանումը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը	կազմակերպության պետական գրանցման համարը, անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը, ֆիզիկական անձի անձնագրի (նույնականացման քարտի) սերիան և համարը	հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), ֆիզիկական անձի հանրային ծառայության համարանիշը կամ համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը	կազմակերպության գտնվելու, անհատ ձեռնարկատիրոջ և ֆիզիկական անձանց բնակության կամ հաշվառման վայրը	ծանուցման ենթակա գործունեության տեսակներն ըստ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի				ծանուցման հաշվառման սերիան	ծանուցման հաշվառման համարը	ծանուցման հաշվառման օրը, ամիսը, տարեթիվը	ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար սահմանված պետական տուրքի վճարման օրը, ամիսը, տարեթիվը	գործունեության իրականացման վայրը, վայրերը, նոր վայրը կամ նոր վայրերը*
					ծանուցման ենթակա գործունեությունը	հոդվածը	կետը	ենթակետը					
1	2	3	4	5	6	6.1	6.2	6.3	7	8	9	10	11

Կատարող _____ _____ Ստորաբաժանման ղեկավար _____ _____

(պաշտոնը, անունը, ազգանունը) (հեռախոսահամարը) (պաշտոնը, անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Կից՝ ___ էջ (լրացվում է թվերով և տառերով)։

____ _____ 20__ թ.

* - Յուրաքանչյուր տողի վրա նշվում է գործունեության իրականացման մեկ վայր

17_1272

Ձև N 2

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԵՎ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԾԱՆՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

20__ թ.__________________ ամսվա համար

____

(տեղեկատվություն ներկայացնող՝ լիազոր մարմնի անվանումը)

NN ը/կ	Ծանուցում ներկայացրած և հաշվառված անձանց վերաբերյալ				Ծանուցումների հաշվառման վերաբերյալ									Ծանուցումների հաշվառման տվյալների փոփոխությունները			Ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքի կասեցման վերաբերյալ						Ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքի դադարեցման վերաբերյալ						
					ծանուցման ենթակա գործունեության տեսակներն ըստ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի																							
	կազմակերպության անվանումը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը	կազմակերպության պետական գրանցման համարը, անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը, ֆիզիկական անձի անձնագրի (նույնականացման քարտի) սերիան և համարը	հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), ֆիզիկական անձի հանրային ծառայության համարանիշը կամ հանրային ծառայության համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը	կազմակերպության գտնվելու, անհատ ձեռնարկատիրոջ և ֆիզիկական անձանց բնակության կամ հաշվառման վայրը	ծանուցման ենթակա գործունեության տեսակի անվանումը	խումբը	դասը	ենթադասը	ծանուցման հաշվառման սերիան	ծանուցման հաշվառման համարը	ծանուցման հաշվառման օրը, ամիսը, տարեթիվը	գործունեության իրականացման վայրը կամ վայրերը*	կազմակերպության փոփոխված անվանումը, անհատ ձեռնարկատիրոջ փոփոխված անունը, ազգանունը, ֆիզիկական անձի փոփոխված անունը, ազգանունը	ֆիզիկական անձի անձնագրի (նույնականացման քարտի) փոփոխված սերիան և համարը	կազմակերպության գտնվելու, անհատ ձեռնարկատիրոջ և ֆիզիկական անձանց բնակության կամ հաշվառման փոփոխված վայրը	կասեցման (այդ թվում՝ ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու) մասին որոշման (հրամանի) օրը, ամիսը, տարեթիվը և համարը	կասեցման մասին որոշումը (հրամանը) կատարման համար պաշտոնատար անձին հանձնելու կամ դրա մասին տեղեկացվելու օրը, ամիսը, տարեթիվը	կասեցման մասին հրամանով (որոշմամբ) նախատեսված կասեցման ժամկետի ավարտի օրը, ամիսը, տարեթիվը	ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու մասին որոշման ուժի մեջ մտնելու օրը, ամիսը, տարեթիվը	կասեցման (այդ թվում՝ ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու) ժամկետը (օրերի քանակը)	կասեցման վերացման օրը, ամիսը, տարեթիվը	դադարեցման մասին դիմումի ստացման օրը, ամիսը, տարեթիվը	դադարեցման մասին դիմումում նշված ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքի դադարեցման օրը, ամիսը, տարեթիվը	ծանուցում ներկայացրած անձի մահվան դեպքում գործունեության դադարեցման օրը, ամիսը, տարեթիվը	դադարեցման հիմքում ընկած ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքի դադարեցման օրը, ամիսը, տարեթիվը	դադարեցման մասին որոշման (հրամանի) օրը, ամիսը, տարեթիվը և համարը	դադարեցման մասին որոշումը (հրամանը) կատարման համար պաշտոնատար անձին հանձնելու կամ դրա մասին տեղեկացվելու օրը, ամիսը, տարեթիվը**	ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքի դադարեցման օրը, ամիսը, տարեթիվը
1	2	3	4	5	6	6.1	6.2	6.3	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26

Կատարող ___________________________ ___________________

(պաշտոնը, անունը, ազգանունը) (հեռախոսահամարը)

Ստորաբաժանման ղեկավար __________________________ _______________

(պաշտոնը, անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Կից՝ __ էջ (լրացվում է թվերով և տառերով):

____ __________________ 20__ թ.

* - Յուրաքանչյուր տողի վրա նշվում է գործունեության իրականացման մեկ վայր

**- Ներկայացման համար սահմանված ժամկետում տեղեկատվության բացակայության դեպքում սյունակը չի լրացվում: Տեղեկատվությունը սահմանված ժամկետից հետո հայտնի դառնալու դեպքում՝ տողը լրացվում է ամբողջությամբ

Ձև N 3

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՑԱԾ ԵՎ ՆՈՒՅՆ ՏԵՍԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՈՒ ՀԱՇՎԱՌՎԱԾ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՁԱՆՑ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

20__ թ._____ ամսվա համար

_____

(տեղեկատվություն ներկայացնող՝ լիազոր մարմնի անվանումը)

NN ը/կ	Լիցենզավորված անձանց վերաբերյալ				Լիցենզավորված գործունեության տեսակների և տրված լիցենզիաների վերաբերյալ								Լիցենզիայի գործողության կասեցման և դադարեցման վերաբերյալ			
	կազմակերպության անվանումը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը	կազմակերպության պետական գրանցման համարը, անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը, ֆիզիկական անձի անձնագրի (նույնականացման քարտի) սերիան և համարը	հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), ֆիզիկական անձի հանրային ծառայության համարանիշը կամ համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը	կազմակերպության գտնվելու, անհատ ձեռնարկատիրոջ և ֆիզիկական անձանց բնակության կամ հաշվառման վայրը	գործունեության տեսակներն ըստ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի				լիցենզիայի սերիան	լիցենզիայի համարը	լիցենզիան տալու օրը, ամիսը, տարեթիվը	լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման վայրը կամ վայրերը*	կասեցման մասին որոշման (հրամանի) օրը, ամիսը, տարեթիվը և համարը	կասեցման մասին որոշումը (հրամանը) համապատասխան անձին պատշաճ հանձնելու կամ նրա մոտ մուտքագրվելու օրը, ամիսը, տարեթիվը	գործողության դադարեցման մասին որոշման (հրամանի) օրը, ամիսը, տարեթիվը և համարը	գործողության դադարեցման օրը, ամիսը, տարեթիվը
					գործունեության տեսակը	հորվածը	կետը	ենթակետը								
1	2	3	4	5	6	6.1	6.2	6.3	6.4	7	8	9	10	11	12	13

Կատարող _____ _____

(պաշտոնը, անունը, ազգանունը) (հեռախոսահամարը)

Ստորաբաժանման ղեկավար _____ _____

(պաշտոնը, անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Կից՝ ___ էջ (լրացվում է թվերով և տառերով)։

____ _____ 20__ թ.

* - Յուրաքանչյուր տողի վրա նշվում է գործունեության իրականացման մեկ վայր

17_1272